# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/9-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-10/4» ծածկագրով ՇՀ ընթացակարգի արդյունքում 2014թ-ի դեկտեմբերի 26-ին կնքված N ՇՀԾՁԲ-10/4-1 ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2015թ-ի սեպտեմբերի 22-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

***Փոփոխության պատճառ:*** Պատվիրատուի մոտ անհրաժեշտություն է առաջացել նվազեցնել Պայմանագիրը(Համաձայնագիրը) կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումները:

***Փոփոխության նկարագրություն***: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Պայմանագիրը(Համաձայնագիրը) կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումները նվազեցվել են՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում(Համաձայնագրում) կատարել փոփոխություն և առավելագույն գինը 17,400,000 (տասնյոթ միլիոն չորս հարյուր հազար) դրամից նվազեցնել 14,817,600 (տասնչորս միլիոն ութ հարյուր տասնյոթ հազար վեց հարյուր) դրամի: Ընդ որում, վերոնշյալի վերաբերյալ Կողմերի փոխադարձ համաձայնությունը ձեռք է բերվել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Պայմանագիրը(Համաձայնագիրը) կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

***Փոփոխության հիմնավորում:*** Սույն փոփոխություն կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 7.2 կետի 1-ին ենթակետը, ինչպես նաև Պայմանագրին կից՝ 29.01.2015թ. կնքված N 1 Համաձայնագրի 3.3 կետը: Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշման 60-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին: Ֆինանսական միջոցների նվազեցումը կատարվել է ՀՀ ՊՆ 15.09.2015թ. ՆՊՆ/520-786 գրությամբ ներկայացված «ՀՀ 2015թ. պետական բյուջեով նախատեսված հատկացումների ներքին հոդվածային վերաբաշխմանը համաձայնության մասին» N15/1 հայտով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ՏՎ և ԳՓՁ վարչության գլխավոր մասնագետ Ռ. Մարդոյանին:

**Հեռախոս՝ 010-29-44-99:**

**Էլ. փոստ՝ r.mardoyan@mil.am:**

**Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:**

**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1**

**N ՇՀԾՁԲ-10/4-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** **22.09.2015թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունն, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և ՌԴ «Սոյուզլիֆտմոնտաժ» ԲԲԸ «Յուգլիֆտ» ԴՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Հ. Ամիրջանովի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կատարող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք հիմք ընդունելով 26.12.2014թ. կնքված № ՇՀԾՁԲ-10/4-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.2 կետի 1-ին ենթակետը, ինչպես նաև Պայմանագրին կից՝ 29.01.2015թ. կնքված N 1 Համաձայնագրի(այսուհետև՝ Համաձայնագիր) 3.3 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

## 1. Փոփոխության առարկան

1.1 Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Պայմանագիրը(Համաձայնագիրը) կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումները նվազեցվել են՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում(Համաձայնագրում) կատարել փոփոխություն և առավելագույն գինը 17,400,000 (տասնյոթ միլիոն չորս հարյուր հազար) դրամից նվազեցնել 14,817,600 (տասնչորս միլիոն ութ հարյուր տասնյոթ հազար վեց հարյուր) դրամի: Ընդ որում, վերոնշյալի վերաբերյալ Կողմերի փոխադարձ համաձայնությունը ձեռք է բերվել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Պայմանագիրը(Համաձայնագիրը) կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով(Համաձայնագրով) նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի(Համաձայնագրի) անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | ՌԴ «Սոյուզլիֆտմոնտաժ» ԲԲԸ «Յուգլիֆտ» ԴՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ՀՀ, ք. Երևան, Արարատյան 43/1 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գանձապետական վարչություն | «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 90001111 0034 80 00 | Հ/Հ 247120001315 |
| ՀՎՀՀ 00867415 | ՀՎՀՀ 00009839 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-ՆՏԱ դեպարտամենտի պետ | տնօրեն |
| Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ | Հ. ԱՄԻՐՋԱՆՈՎ |